ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 17 >> սեպտեմբերի 2015թ. N 66

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՍՏՈՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N245 որոշմամբ հաստատված Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.4.1 կետը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. 2015 թվականի սեպտեմբերի 10-ին <<Արմավիրի հաստոցաշինական գործարան>> բաց բաժնետիրա-կան ընկերությունում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը օբյեկտի փլուզված մասնաշենքից» թեմայով:
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Ա. Ամիրջանյանին:
3. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ընդգրկել Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատը, <<Արմավիրի հաստոցաշինական գործարան>> բաց բաժնետիրական ընկերության հետախուզական և որոնողափրկարարական կազմավորումները, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի մեկ վերակարգ, <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական

կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շտապ բուժօգնության ծառայությունից մեկ գծային բրիգադ(համաձայնությամբ):

4. ՈՒսումնավարժության ղեկավար Ա.Ամիրջանյանին՝ ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ, ապահովել ուսումնավարժության նախապատրաստումն ու կազմակերպել անցկացումը:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով,

3) ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնների պահանջների կատարումը

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն կարգադրությունը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ուսումնավարժության ղեկավար, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Ա. Ամիրջանյանին:

8. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ղ.ՄՈՒՐԱԴՅԱՆ